

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐԿՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 19.4. Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը

1) ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
10000-ապատիկի
120000-ապատիկի
չափով

2) վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
50-ապատիկի չափով

3) շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսպատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
500-ապատիկի չափով

4) գունազեղ քարերի, բացառությամբ վանակատի (օբսիդիանի), յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
10000-ապատիկի
չափով

4.1. Վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
100-ապատիկի չափով

5) մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ձյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
10000-ապատիկի
120000-ապատիկի
չափով

6) հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝

- արդյունաբերական (շշալցման) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի 5000-ապատիկի չափով

- արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի 500-ապատիկի չափով

-բուժական (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի 500-ապատիկի չափով

7) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար՝

ֆիզիկական անձանցից

բազային տուրքի չափով

իրավաբանական անձանցից

բազային տուրքի 10-ապատիկի չափով

8) *(կետն ուժը կորցրել է 23.06.15 ՀՕ-112-Ն)*

9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի 50-ապատիկի 200-ապատիկի չափով

10) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի նպատակով միանգամյա թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի 400-ապատիկի 400-ապատիկի չափով

11) կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի 500-ապատիկի չափով

(19.4-րդ հոդվածը լրաց. 28.11.11 ՀՕ-282-Ն, 19.12.12 ՀՕ-255-Ն, փոփ. 23.06.15 ՀՕ-112-Ն, լրաց. 12.05.16 ՀՕ-78-Ն, փոփ. 29.06.16 ՀՕ-123-Ն, լրաց. 13.11.19 ՀՕ-257-Ն)

